

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին

ՀՈՂԿԱԾ 1. Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքի (ընդունված է 2000 թվականի հուլիսի 6-ին) 19-րդ հոդվածը լրացնել նոր՝ 1.1 եւ 1.2 մասերով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Արգելվում է սննդամթերքի արտադրության համար ներմուծել սննդային հումքեր եւ սննդային հավելումներ, ինչպես նաեւ փաթեթավորված պատրաստի սննդային արտադրանք (սննդամթերք), անկախ այն հանգամանքից, թե պիտանիության ժամկետի նշումը ինչ լեզվով է կատարված, որոնց՝

ա) պիտանիության ժամկետը Հայաստանի Հանրապետություն ներմուծվելու պահին անցած է,

բ) ընդհանուր պիտանիության ժամկետից անցել է 2/3-ից ավել ժամկետ,

գ) փաթեթավորման կամ տարայի վրա պիտանիության ժամկետը բացակայում է,

դ) պիտանիության ժամկետի նշումը աղավաղված է,

ե) ժամկետը կրկնակի մակնշված է կամ արտադրողի կողմից նշված բնօրինակ ժամկետը ջնջված է եւ նշված է նոր ժամկետ:

Սույն սահմանափակումները չեն տարածվում արտադրական վերամշակման չենթարկված գյուղատնտեսական մթերքների վրա:

1.2. Արգելվում է սննդամթերքի արտադրության համար ներմուծված սննդային հումքերի եւ սննդային հավելումների, ինչպես նաեւ փաթեթավորված պատրաստի սննդային արտադրանքի (սննդամթերքի) հայերեն լեզվով մակնշումը փակցնել արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետի վրա:»:

ՀՈՂԿԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԻՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՅՈՒՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՅՈՒՄՆԱԿԱՆ ԱՆՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկվող օրենքների նախագծերի նպատակն է Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքով սահմանված մեխանիզմներով բացառել Հայաստանի Հանրապետություն ժամկետանց, ինչպես նաև պիտանիության ժամկետի 1/3-ից պակաս ժամկետով սննդամթերքի եւ սննդային հավելում հանդիսացող ապրանքների ներկրումը:

Օրենքի նախագիծը հնարավորություն կտա պաշտպանել մարդու կյանքն ու առողջությունը, ապահովել արտադրանքի կամ ծառայությունների նկատմամբ սպառողների վստահությունը:

Նախագիծը կերաշխավորի սպառողների կողմից պատշաճ որակի եւ սպառողների կյանքի ու առողջության համար անվտանգ ապրանքների ձեռքբերման, սպառողների շահերի պետական եւ հասարակական պաշտպանության իրավունքները:

Քանի որ սննդամթերքը վերջին հաշվով սպառողին է հասնում առևտրի կետերի միջոցով, ուստի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները նպատակ ունեն վարչական տուգանքներ կիրառելու մեխանիզմներով պաշտպանել ինչպես սպառողների իրավունքները, այնպես էլ բացառել առևտրի կետերի կողմից պիտանիության ժամկետը սպառված սննդամթերքը արտադրողներից կամ ներմուծողներից ձեռք բերելն ու իրացնելը:

Եթե «ՀՀ Մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը կբացառի ժամկետանց, ինչպես նաև պիտանիության ժամկետի 1/3-ից պակաս ժամկետով սննդամթերքի եւ սննդային հավելում հանդիսացող ապրանքների ներկրումը, ապա առաջարկվող «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը իր հերթին կապահովի, որպեսզի տեղական շուկայում բացառվեն, ինչպես տեղական արտադրողների կողմից, այնպես էլ ներմուծողների կողմից ժամկետներում ներկրված, սակայն պիտանիության ժամկետը սպառված սննդամթերքի իրացումը: Օրենքի նախագիծով առաջարկվող փոփոխությունը կերաշխավորի սպառողի՝ սննդամթերքը եւ սննդային հավելումները անվտանգ օգտագործելու իրավունքը:

Հիշյալ նախագծերը քննարկվել են սպառողների իրավունքների պաշտպանության տարբեր հասարակական շահագրգիռ կառույցների հետ եւ արժանացել նրանց հավանությանը:

Հեղինակներ՝ [Արա Նռանյան](#), [Կարեն Վարդանյան](#), [Ստյոպա Սաֆարյան](#), [Վարդան Բոստանջյան](#), [Արմեն Մարտիրոսյան](#), [Ռուզաննա Առաքելյան](#), [Արծվիկ Մինասյան](#)